

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

17 հունիսի, 2020 N 31

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N 1 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով՝ **որոշում եմ**.

1. Արցախի Հանրապետության պարետի 2020 թվականի ապրիլի 13-ի «Արցախի Հանրապետություն մուտք գործելու առանձնահատուկ և անհետաձգելի համարվող դեպքերը սահմանելու, Արցախի Հանրապետություն մուտք գործելիս և Արցախի Հանրապետության վարչական սահմաններում կիրառվող սահմանափակումների մասին» N 1 որոշման՝

1) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված անձինք (բացառությամբ մինչև վեց տարեկան երեխաների) Արցախի Հանրապետության տարածք մուտք գործելիս ԱՀ առողջապահության նախարարության աշխատակիցներին ներկայացնում են իրենց վերաբերյալ պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) թեստի դեպքում՝ երեք օրից ոչ ավելի վաղեմության, իսկ արագ (ռապիդ) թեստի դեպքում՝ երկու օրից ոչ ավելի վաղեմության COVID-19 թեստի պատասխանը:

Սույն կանոնից բացառություն է արվում բեռնափոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի վարորդի և ուղեկցողի համար, ովքեր Արցախի Հանրապետության տարածք մուտք գործելիս ԱՀ առողջապահության նախարարության աշխատակիցներին ներկայացնում են իրենց վերաբերյալ պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) թեստի դեպքում՝ տասը օրից ոչ ավելի վաղեմության, իսկ արագ (ռապիդ) թեստի դեպքում՝ յոթ օրից ոչ ավելի վաղեմության COVID-19 թեստի պատասխանը:

Սույն կետով սահմանված կարգավորումից բացառություն կարող է արվել միայն Պարետի ցուցումով՝ բացառիկ դեպքերում:».

2) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն որոշման 3-րդ կետով նախատեսված անձինք (բացառությամբ մինչև վեց տարեկան երեխաների) Արցախի Հանրապետության տարածք մուտք գործելիս ԱՀ առողջապահության նախարարության աշխատակիցներին ներկայացնում են իրենց վերաբերյալ պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) թեստի դեպքում՝ երեք օրից ոչ ավելի վաղեմության, իսկ արագ (ռապիդ) թեստի դեպքում՝ երկու օրից ոչ ավելի վաղեմության COVID-19 թեստի պատասխանը:

Սույն կանոնից բացառություն է արվում բեռնափոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի վարորդի և ուղեկցողի, ինչպես նաև գյուղատնտեսական կամ այգեգործական աշխատանքներ իրականացնող անձանց համար, ովքեր Արցախի Հանրապետության տարածք մուտք գործելիս ԱՀ առողջապահության նախարարության աշխատակիցներին ներկայացնում են իրենց վերաբերյալ պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) թեստի դեպքում՝ տասը օրից ոչ ավելի վաղեմության, իսկ արագ (ռապիդ) թեստի դեպքում՝ յոթ օրից ոչ ավելի վաղեմության COVID-19 թեստի պատասխանը:

Սույն կետով սահմանված կարգավորումից բացառություն կարող է արվել միայն Պարետի ցուցումով՝ բացառիկ դեպքերում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ